

Մայիս 15) այս պարագան կ'իմացնէ Երուսաղէմի պտրքին. և Յարութիւն վրդին համար կը խնդրէ օրհնութեան զիր մը. մհտ. Գրիգոր նոյն նամակին վերջը Յարութիւն վրդի համար կ'աւելցնէ հետեւեալ տողերը. «յատուկ այը Աստուծոյ է և հարգատ սը. Երուսաղէմայ»:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԶ. ՅԱԿՈՒԵԱՆ ԽՍՐԲԵՐԳՅԻ (Մեղրի).— Ծ. 1853 Մարտ 13ին. աւագանի անունը կարապետ. 1873ին աշկ. ժառ. Վարժի, ուր կը մնայ չորս տարի, իր Երուսաղէմ գալէն առաջ 1867ին արգէն ամուսնացած էր Խարբերդի մէջ: 1877ին քահանայ կը ձեռնադրուի Երեմիա արքեպս.էն իր ծննդավայրի գիւղին Ս. Լուսաւորիչ եկեղեցիին վրայ. կը մեկնի Երուսաղէմէն ու երեք տարի կը պաշտօնավարէ իր գիւղի եկեղեցիին մէջ, նոյն ատեն տեղւոյն աղջկանց վարժարանի տնօրէնի եւ ուսուցչի պաշտօնները վարելով: 1880-1896 կը մնայ Ակն, ուր հինգ տարի ուսուցչութիւն ալ կ'ընէ և ապա կը կարգուի առ. փոխանորդ և տեղապահ: 1892ին իբրև պատգամաւոր Ակնայ, կը մասնակցի Խրիմեան Հայրիկի կաթողիկոսական ընտրութեան: 1896ին կը փոխադրուի իր ծննդավայրը ուր կը մնայ չորս տարի, 1898ին ազգին և միսիոնարաց կողմէ կը կարգուի նպաստաբաշխ Խարբերդի գաւառին և Գաշտի գիւղերուն: 1900ին Ամերիկա մեկնելուն առթիւ, երբ Աղեքսանդրիայէն կ'անցնէր կը հրաւիրուի հոն քահանայագործել, ուր կը մնայ հինգ տարի չափ, վերջին չորս տարիներուն՝ իբրև աւագերէց և փոխանորդ. 1905 փետր. 11ին նոյն կրկնակ պաշտօններով կը փոխադրուի Գահիրէ և 1911ին անձնական տկարութեան պատճառաւ կը հրաժարի երկու պաշտօններէն ալ: Եզիպտոսի մէջ միշտ եղած է եկեղց. երեսփոխան և անգամ Կրօն. ժողովոյ: Կը վախճանի 1920 Օգոստ. 20ին Գահիրէի հրէից հիւանդանոցին մէջ, ուր փոխադրուած էր օր մ'առաջ. թաղուած է Մարմինայի գերեզմանատունը:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԶ. ՍԵՐՈՎԵԷԱՆ ՂԱԼԱԹԻՈՅ, ԳԱԼՈՒՍՏ ՎԱՐՔԱՊԵՏ Տ. ՊՕՂՈՍԵԱՆ ԱՄԴԵՅԻ.— 1856ին Պոլսի վարչութեան կողմէ իբր հրաւիրակ կը զրկուին Ս. Յակոբի վանքը. Յովհաննէս պտրքը Պոլիս առաջնորդելու համար. բայց պատրիարքին տկարութեան պատճառով, հետեւեալ տարին 1857ին ձեռնունայն կը վերադառնան Պոլիս: Յովհաննէս պտրք. այս